



ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ

ԱՄԵՐԻԿԱԶՅ ՔԱՆԱՍՏԵՂԾ Կ. ՄԻՏՍԼԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՍԻՆ

Ամերիկահայ Հառաջդիմական Միության հրատարակությամբ անցյալ տարի Նյու-Յորքում լույս է տեսել ամերիկահայ նշանավոր բանաստեղծ Կ. Սիտալի տպավորությունները Հայաստանից՝ «Տեսա մեր երկրի արևածագը» վերնագրով: Նա Հայաստանում եղել է 1946 թվին՝ մասնակցելու Հայաստանի Սովետական գրողների միության համագումարին: Հեղինակը այդ ժամանակ այցելել է Մայր Աթոռ և ընդունվել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.—ի կողմից: Մայր Աթոռից՝ ստացած իր տպավորությունները բանաստեղծ Սիտալը շարադրել է առանձին գլխով, որը բերում ենք ստորև ամբողջությամբ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԽՈՍՈՒՄ Է

ԵՐԿՐՈՐԻ ԱՅՑՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԷԶՄԻԱՄՆԻ



Եղի 32 տարիների առաջ էր, որ ես էջմիածին այցի էի եկել:

Այն օրերին ծովերի մակընթացության համար նորից աճում և մեծանում էր ջարդերի սարսափը «սահմանադրական» Թյուրքիայում: Եվ ես, դեռ հազիվ քսան գարուններ բոլորած մի երազող, խանդավառ պատանի, խորունկ ցավով և անսահման վշտով թողած իմ հայրենի չքնադագեղ Վանը՝ փախչում, հեռանում էի այդ սպառնացող, անանում մղձավանջից:

Մեր այժմու աղատ և չքնաղ աշխարհի սրտում էլ անգթորեն մխրձվել էին ցարերի գիշատիչ արծվի արյունոտ մագիլները: Զգում էի, որ պատմական էջմիածնի վրա էլ արճիճի ծանրությամբ տարածվել էր նույն այդ զարհուրելի հավքի մռայլ և ահավոր ստվերը:

Հայ ժողովրդի համար ազգային և զգացմունքային վիթխարի բովանդակության այդ հնադարյան վանքը չգիտեմ ինչու ես այն

ժամանակ ժողովրդից վեր և նրանցից առանձնացած, հեռավոր մի միջնաբերդ, մի պատկանելի ամրոց էի գտել:

Միաբնակության անդամները ինձ մի-մի փոքր իշխաններ էին երեացել: Իսկ Գևորգ Ե. Կաթողիկոսին տեսնելու համար այնպիսի դժվար և ահազդու արարողություններից էի անցել, որ շատ ճնշող ու ցավագին տրպավորությամբ էի հեռացել էջմիածնից:

Ժողովրդական, հյուրընկալ, սրտաբաց մի ազգային հաստատության փոխարեն ես այնտեղ գտել էի մի ինքնամիտփ—ժողովրդից կղզիացած մի հեռակա կրոնական իշխանություն:

Այդպես էին տպավորություններս 32 տարի առաջ էջմիածնի տված իմ առաջին այցելությունս:

Այսօր, 32 տարիների հետո, աշնանային մանր ու բարակ մաղվող անձրևի տակ ես դարձյալ էջմիածին այցի եմ եկել արտասահմանի և Հայաստանի մի շարք գրողների ընկերակցությամբ:

Սիրով և ջերմորեն մեզ ողջունում են ներկա միաբնակության մի երկու անդամները: Մեր և նրանց միջև եղած տարբերությունը ես միայն արտաքինի մեջ եմ տեսնում: Նրա

րանք իրենց կղերական մուսլ և անհրապույր տարազն ունեն—բայց արտահայտության և զգացմունքով մեղանից չեն տարբերվում:

Տաճարի պլանավոր մուտքի առաջ կանգնած նայում եմ բերդի նման անառիկ և մընայուն դեղեցկությամբ, վերամբարձ ոճով, զմայելի և ինքնատիպ քանդակներով պատմական այս մեծահուշակ սրբավայրին: Տասն և վեց ու կես դարերի արյունով, հերոսական և փառապանծ մի շրջան բոլորելուց հետո՝ մեր ժողովրդի նման անսասան և վեհափառ կանգնել է նա մի հրաշագեղ արևածագի առաջ:

Մտածում եմ, որ էջմիածնի այս դարավոր ու փառավոր տաճարը տակավին հաստատու կանգուն է մնում, որովհետև այդպես է կրամեցել մեր ժողովուրդը, որովհետև նրա բաժին եղած բոլոր վայրագ բռնություններից, ջարդերից, ավերվածություններից և նույն իսկ մահից ավելի մեծ տ հզոր է եղել իմ ժողովուրդը: Որովհետև նա էջմիածինը իր գոյության որպես խորհրդանշան է համարել և նրան անսասան և կանգուն է պահել իր անմեռ հույսի և հավատքի նման:

Հեռավոր և բարեպաշտ մի ուխտավորի նման երկյուղածորեն ներս եմ մտնում մեծանուն տաճարից: Զգում եմ, որ իմ հոգում հորդում են այստեղ կուտակված տասն և վեց ու կես դարերի ահագին հուզմունքն ու սարսուռը:

Ի՞նչ աղոթք և մրմունջ և աղերս ու փառաբանություն է թափվել այս պատերով ներս և ապա վարարել, բարձրացել մինչև զեղանկար և երկնապայց այս զմբեթը անընդունելի խնկի ծխի հետ:

Հայ ժողովրդի հին և հուշակավոր այս մայր եկեղեցին ոչ Այա Սոփիայի հույկապ, կայսերական մեծափարթամություն ունի և ոչ էլ Հռոմի Սուրբ Պետրոսի վիթխարի, արձանազարդ, մարմարակերտ շքեղությունը: Էջմիածնի տաճարը մեր ժողովրդի դիմացկուն, «հաստակող» և սակայն հրաշափառ շնորհք և անդիմադրելի գրավչություն ունի: Մինչդեռ մեր ողբերգական, շարադետ պայմաններում, մեր արյունաշաղխ հողի վրա այդ մյուս հսկաներից քար քարի վրա շէր մնալու, էջմիածինը՝ մեր ժողովրդի նման շարքաշ և անխորտակելի՝ և բովանդակալից ժպտում է դարերի և կործանիչ հորդանների ավերածության դեմ միշտ թարմ ու խնկահոտ և հպարտ:

Մեծարժեք պատմական առարկաների, արվեստի գործերի, սրբազան անոթների, ձեռագործների գուրգուրուտ, խնամքով, երկյուղած պահպանումը խոշորագույն ծառայություններից մեկն է, որ էջմիածինը կա-

տարել է հայ ժողովրդի համար: Այս մտածումը փայլատակում է իմ մտքում, երբ Սրբազան Հայրը բաց անելով պահապանի դուռը մեզ փոխադրում է հեքիաթների կախարդական մի գանձարան:

Հափշտակությամբ և անզուսպ հետաքրքրությամբ նայում եմ մասնավորապես մեր ժողովրդի կրոնական կյանքը խորհրդավոր գեղեցկությամբ պարուրող սրբազան առարկաներին—մեռունի համբավավոր հին և ավելի նորագույն կաթսաներին, մեռունածոր աղավնակերտ անոթներին, նրբաձև և հրաշակերտ սկիհներին, բուրվառների, արևով և զեփուռով հյուսած շուշիաներին, ոսկեճամուկ, մետաքսահյուս շուրջառներին, ականակուռ շաթալ թագերին, գոհարավառ գավազաններին, վակասներին, ծնծղաններին ու խաչերին, շքեղ և զեղանկար վարագույններին: Այս սրբազան հուկությունների մեկ մասը պահպանվել է հին ժամանակներից և մի մասն էլ Մայր Աթոռին նվերներ են եղել հայ բարեպաշտ ունեորների կողմից՝ ուղարկված Հնդկաստանից, Նոր Զուղալից, Չին ու Մաչինից, Իրանից, ցարերի մայրաքաղաքից, Պոլսից և շատ ուրիշ վայրերից:

Հայ մեծահարուստների այս նվերներով պահպանվել է հայ եկեղեցու ծխականը, արտաքինը: Իսկ նրա հավետ ժողովրդական, գեղասեր և ազատատենչ ոգին աճել ու մեծացել է մեծափրտ և բազմապարչար հայ գյուղացու և արհեստավորի մաքուր և անկեղծ նվիրումով, նրա արյունով և սրայթարով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

Դուրս ենք ելնում պահարանից և մեծափառ տաճարից: Դեռ անձրևի բարակ մի շրջարշ է կախվել էջմիածնի վերև:

Ընդառաջելով մեր բաղձանքին, Գեորգ Դ. Կաթողիկոս Չորեքչյանը բարեհաճել է մեզ ընդունել: Վեհարանի ծաղկազարդ բակից լայն սանդուխներով բարձրանում ենք դեպի կաթողիկոսական ընդունարանը:

Սա միևնույն սրահն է, ուր 32 տարի առաջ դողով և երկյուղածությամբ հանդիպում էի ունեցել Գեորգ Ե կաթողիկոսի հետ:

Սեղանի ճակատում կա մի ցած բեմ հայրապետական համեստ գահով և մի սեղանով: Սենյակի երեք կողմերում աթոռներ են շարվել այցելուների համար: Այստեղ առեն ինչ վերին աստիճանի մաքուր և անսեթևեթ է, ինչպես որ վայել է խոնարհ նազովրեցու արժանավոր աշակերտին:

Բեմի մոտիկ դռնից՝ հանդարտ քայլերով և հայրական առինքնող մի ժպիտ երեսին ներս է մտնում Վեհափառը: Ներկաներս

հոտնկայս ողջունում ենք համակրելի, պատկառելի Հայրապետին:

Նա մի րուպե արծվի սուր աչքերով իր շուրջը դիտելուց հետո քաղցր ու սիրալիր շեշտով բարի գալուստ է մաղթում արտասահմանի գրողներին և մեր միջոցով ողջունում է Սփյուռքի շորս ծագերում ընկած իր սիրեցյալ ժողովրդին:

Վեհափառ Կաթողիկոսը հայտնում է, որ առանձին հետաքրքրությամբ և ոգևորությամբ նա հետևել է Գրողների համագումարին: Նա հոգով հրճվել է, տեսնելով այնտեղ դարձնվող մշակութային այն հրաշալի միասնականությունը հրով, սրով և մրրիկներով իրարից երկար ժամանակ բաժանված մեր ժողովրդի զույգ հատվածներին:

Ապա իր զմայելի և ոսկեհնչյուն հայերենի զգալուն պերճախոսությամբ նորընտիր հովիտպետը հայտարարում է, որ գուցե նա Հայոց Հայրապետներից ամենից բախտավորն է եղել, որովհետև այսօր նրա աչքերի առաջ, մայրենի հողի վրա կատարվում է մեր պատմության ամենանշանակալից և խոշոր մի դեպք — հայրենադարձը:

Այս հրաշափառ և մեծիմաստ դեպքի մեր շահագնաց մոտիկությունը, շարունակում է նա, գուցե մեզ թույլ չտա տեսնել կատարված եղելության իրական և անմիջական հսկա կարևորությունը: Անմիջական ստորոտից ամենամիթխարի լեռն անգամ, որպիսին է մեր նվիրական Արարատը, միջակ է երևում: Մի քիչ հեռվից և շրջապատի առարկաների հետ բաղդատելուց հետո միայն կարելի է ըմբռնել նրա իսկական մեծությունը:

Ինչ որ պատահում է հայ ժողովրդին այս բախտավոր հայրենադարձով աննախընթաց, մեծափառ ազգային մի հաղթանակ է, որ հայ ժողովուրդը տանում է իր ճակատագրի և թշնամիների դեմ:

Հայ ժողովուրդը, շարունակում է Վեհափառը, մեր արյունոտ և հերոսական պատմության անվերջ ճանապարհն ընթացել է մենավոր և անընկեր: Նրան չի հաջողվել իրեն զինակից ու պաշտպան տնենալ հզոր և ազնիվ մի դրացի՝ պատմության ամենաբախտորոշ պատերազմների ուղին և ռազմադաշտը հանդիսացող նրա հայրենիքի պաշտպանության գործում: Նրա կենսական շահերն երբեկից չեն նույնացել շարունակ փոփոխվող նրա մեծ հարևանների շահերի հետ:

Ահա թե ինչու այնքան դժբախտ եղավ Ներսես Վարժապետյան Պատրիարքի քաղաքականությունը Բեռլինի Վեհաժողովի առիթով: Ներսես Պատրիարքի և Պրլահայ տիրող շրջանակների որոշումով, հայ ժողովրդի համար բախտորոշ այդ Վեհաժողո-

վում հայկական պատվիրակությունը մերժեց ռուս մեծ ժողովրդի կողմից նրան մեկնած բարեկամական ձեռքը: Մեր ժողովրդի բախտը վատահվեց արևմտյան դեմոկրատիկ պետությունների և, գլխավորաբար, մեծ աշխարհակալ Անգլիո բարյացակամությանը:

Այս աղետալի ընտրության հետևանքով հայկական վեց վիլայիթների ազատարար ռուս բանակի կողմից թյուրք կառավարության պարտադրված Այա Ստեֆանոյի 16-րդ հոդվածի փոխարեն մեր ժողովուրդն ստացավ Բեռլինի տխրահռչակ դաշնագրի 61-րդ խայտառակ հոդվածը:

Այն օրից ի վեր հայ ժողովուրդը Մերձավոր Արևելքում անգլիական կայսերապաշտական շահերն ապահովող թշվառ նոխազի դերումը մնաց: Թյուրք կառավարությունը լրիվ ըմբռնեց Անգլիո «պաշտպանություն» իմաստը և շարունակական ջարդերով և հալածանքներով փորձեց Տաճկահայաստանը դատարկել հայերից:

Բեռլինում հայերիս վարած այդ աղետալի քաղաքականության հետևողականության արդյունքը պետք է նկատել տաճկահայ ժողովրդի աննախընթացորեն անգույշ տեղահանությունն ու զարհուրելի ջարդերը: Ինչ որ մեր բազմահազար տարիների պատմության ընթացքում չէր հաջողվել մեր գոռ և ահեղ թշնամիներին, արյունարբու և ոճրագործ թյուրքերին հաջողվեց ի դուրս հանել:

Որքան տարբեր կլինեի հայ ժողովրդի բախտը, եթե փոխանակ Բեռլինի 61-րդ հոդվածի, մեր ներկայացուցիչները պնդեին և ստանային Այա Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, եթե նրանք փնտրեին և ապահովեին ռուս մեծ ժողովրդի բարեկամությունը:

Այսօր, շարունակում է Հայրապետը, շնորհիվ ռուսական հեղափոխության մեզ բարեկամ և դաշնակից ունենք նույն այն ռուս ժողովուրդը, որ մեզ ապահովություն էր խոստանում իր զինված ուժերի միջոցով, և սակայն, որը մերժվեց այն ժամանակի մեր ղեկավարների կողմից: Այսօր մեր շահերը նույնանում են ռուս ժողովրդի շահերի հետ:

Այս բարեկամությունն ու զինակցությունը մեզ տվել են ծաղկած մի տնտեսություն և վերին աստիճանի բարձր մի մշակույթ: Մեզ տվել են ապահովություն և վերելքի անսահման հնարավորություն:

Շնորհիվ ռուս ժողովրդի այս բարեարթ օժանդակության մեզ համար հնարավոր է դառնում մեր դռները ու սրտերը բաց անել Սփյուռքի մեր հարազատներին: Այսօր, ձեր սննդական աչքերի առաջ, տեղի է ունենում մեր ազգահավաքը — հայրենադարձը: Դուք գրողներդ էլ դեռ երեկ կատարեցիք մեր ժողովրդի մշակութային միությունը:

Ռուս ժողովրդի այս նախախնամական բարեկամությունը հիմնովին շրջել է մեր պատմության եղբերական, աղետալի ընթացքը և մեր ժողովրդին դրել է նոր և պայծառ մի ճանապարհի վրա, որտեղից սկսվում է մեր նոր և լուսաշող պատմությունը:

Հայրենադարձը ներկա օրերի մեր ամենամեծ և այժմեական խնդիրն է: Նրան պետք է նվիրվի ամեն մի հայ իր հոգու բովանդակ ջերմությամբ և իր նյութական ամեն կարելի միջոցներով: Ով իր օգնությունը զլանում է հայրենադարձին, նա իրեն կըտրում է հայ ժողովրդից — նա դավաճանում է իր ժողովրդին:

Հայրենադարձը բանալին է մեր հողամասերի ետ ստացման: Բայց պետք է, որ նախ պատվով և հաջողությամբ պսակվի հայրենադարձի մեծ գործը:

Սա անմեռ և հաստատ հավատք ունեմ, որ երկուսն էլ իրականացած կտեսնենք շատ մոտիկ ապագայում, որովհետև մենք այժմ մեզ ճշմարիտ բարեկամ և պաշտպան ունենք Սովետական հզոր և հաղթական Միությունը, որովհետև մեր դատը արդար է և աստուծոմով արդարությունը կը հաղթանակի ի վերջո:

Արտասահմանի հայ գրողների պարտականությունն է նույն այս հավատքով սպառազինել Սփյուռքի հայությունը:

Այստեղ մեր փառավոր հայրենիքում մենք ունենք անխախտ և կուռ միասնականություն:

Արտասահմանի մեր սիրելի և հարազատ զավակներից ես միևնույն գիտակից և եղբայրական միասնությունն եմ սպասում:

Դուք այստեղ տեսաք թե մեր ժողովուրդն ու պետությունը ինչ գուրգուրանքով և հոգածությամբ են շրջապատում մեր հայրենադարձ հարազատներին: Սփյուռքի մեր ժողովուրդն էլ պիտի անի իր կարելին, որ հայրենադարձը փառապանծ հաջողություն դառնա, որ մեր պատմական հողամասերի պահանջը շարունակ Միացյալ Ազգերի և մեծ պետությունների սեղանի վրա լինի: Այս գործում գեղեցիկ և պատվավոր աշխատանք է կատարել Ամերիկայի մեր սիրեցյալ ժողովուրդը: Գիտեմ, որ նա այսուհետև ամբիջի ամուր միասնությամբ և ոգևորությամբ պիտի շարունակի այս վսեմ աշխատանքը:

Երկրի և Սփյուռքի հայության կուռ միասնականությունը մեծ ու ազնիվ ռուս ժողովրդի անխաղախ բարեկամությամբ և Աստուծո կամքով մենք նորից կը միատեղվենք և տեր կդառնանք մեր պատմական հողամասերին: Այն ժամանակ մենք կը կառուցենք մեր հողերը կյանքն էլ սիրով, խընդովքամք և հոյակապ և հիասքանչ նոր և կեղեցիկներով:

Սլ մեր միացյալ ժողովրդի քրտինքով և հանճարով և մեր զինակիցների պաշտպանության ներքև մեր երկիրը նրբմական դրախտից ավելի գեղեցիկ և մշտադալար կը դարձնենք:

Հայոց Հայրապետի վճիտ և լուսավոր պերճախոսությունը, նրա վսեմ և սքանչելի հայրենասիրությունը և հավատքը, Հայաստանի աշնանային մեղրահամ մրգերի նման հասուն և հյութալի նրա իմաստությունն և ամենից ավելի նրա պատկառելի և հայրական անձի հմայքն ու սիրելիությունը մեզ հուզել և կախարդել են:

Թեև լույ է նրա դաշնալուր բառերի վերջին արձագանքը մեր ականջներում, սակայն նրա կշռույթավոր, հզոր խոսքի լուսնոտի քաղցրությունը տակավին շարունակում է և պիտի շարունակե հնչել մեր հոգում անմեռ հավատքի և հաղթանակի դյուրեկան դողանքով:

ԹԵՅԱՍԵՂԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ

— Շատ երջանիկ կը լինեի, եթե ինձ հետ մի մի բաժակ թեյ խմեիք. քաղցրորեն առաջարկում է Վեհափառ Հայրապետը: Համաձայնում ենք անզուսպ խնդությամբ:

Ժպիտը դեմքին և հայրաբար նա մեզ առաջնորդում է մի տրիշ սենյակ՝ Հայաստանի արևահամ պտուղներով ծանրաբեռնված մի գեղեցիկ և շեն սեղանի շուրջ:

Միծաղկոտ և մտերիմ այս սեղանի շուրջ Ամենայն Հայոց Հովվապետի անձը մեզ համար շատ ավելի քաղցր վայելք է հանդիսանում, քան մեր արևոտ երկրի նեկտարահամ պտուղները, քան Երևանի հոպալավոր և համով գաթան, քան շաքարն ու կարկանդակը, որոնք զմայելի ճաշակով և հայկական շեն ու պայծառ առատությամբ ծածկում են սեղանը:

Հայկական արձակի մեծ վարպետ սիրելի Դերենիկ Դեմիրճյանը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում արտասահմանյան գրողներին մի առ մի: Քիչ առաջ, մյուս սենյակում Հովվապետի բարի գալստի հոյակապ խոսքերին պատասխանում ենք արտասահմանի գրողներս չերմորեն: Վեհափառին հայտնում ենք, թե հայ ժողովուրդն ու եկեղեցին բախտավոր են համարում, որ ներկա բախտորոշ վայրկյանին նրա նման մի իմաստուն և արժանավոր աթոռակալ ունեն իրավունքի պայծառ դահի վրա բազմած: Դրվատում ենք պատերազմի ողջ տեվողությունը նրա մեծ հայրենասերի և կրոնական Հովվապետի փայլուն և խոհեմ ղեկավարությունը: Շեշտում ենք, որ արտասահմանի հայ մամուլի կողմից նրան տըր-

ված «Մեր օրերի Ղևոնդ Երեց» պատմա-
նունը սքանչելիորեն պատշաճում է նրան,
ինչպես էջմիածնի տաճարի փառավոր գրմ-
բեթը ներդաշնակվում է նրա հոյակապ կա-
ռուցվածքին: Վերհիշում ենք թե նա էր, որ
Սասնա ծռերի հրեղեն նստույզի փոխարեն
մեր քաղերին տվեց Սասունցի Դավիթ հրա-
շունչ տանկերը: Մեր խորին երախտագի-
տությունն ենք հայտնում նրան, որ իր ներ-
շնչող ղեկավարությամբ պատեհություն
տվեց Սփյուռքի հայության, որ նա էլ իր
նյութական և բարոյական կարելի բաժինը
բերի Հայրենասիրական մեծ պատերազմին:
Այս պանծալի Հովվապետին ցանկանում
ենք հրկար կյանք և արեւատություն:

Դեմքը ողողված անսահման սիրով և
ցնծությամբ, ինչպես որ Մասիս սարն է ո-
ղողվում արևի շողերով՝ նա մեր միջոցով
իր գոհունակությունն է հայտնում արտա-
սահմանի իր սիրեցյալ հոտին:

Նստել եմ այս մաքուր կրոնավորի, այս
պայծառ մտավորականի և երաժշտագետի,
այս հոյակապ հայ մարդու և օրինակելի
քաղաքացու կողքին: Իմ այս մոտիկ և նա-
խանձելի դիրքից անպատմելի հրճվանքով
հետևում եմ նրա բարի, հայրական, գորտ-
վոր դեմքի փոփոխվող հուզմունքի, ցնծու-
թյան, լուրջ և մերթ խորախորհուրդ արտա-
հայտություններին:

— Վեհափառ հայր, ինչպե՞ս են եկեղեցու
և պետության փոխհարաբերությունները,—
հարց է տալիս իմ ընկերներից մեկը:

Դեռդ Զ. Հայրապետը պատասխանում
է մոտավորապես հետևյալ կերպով.—

— Եկեղեցին չի կարող չտեսնել այն հո-
յակապ և մեծահրաշք աշխատանքը, որ մեր
պետությունը կատարում է հայ ժողովրդի
վերակառուցման մեծ գործում: Ավերակնե-
րից ու մոխիրներից կառուցվում է մի
նուրբ և պայծառ ժողովուրդ, մի արդար և
բարգավաճ հայրենիք:

Հայոց եկեղեցին, երախտագիտությամբ
նշում և օրհնում է մեր կառավարության
այս ազգաշեն, հիանալի աշխատանքը և նա
էլ անում է ամեն ինչ օժանդակելու այս
վսեմ գործին:

Պետությունն էլ իր հերթին զնահատում
է եկեղեցու անշահախնդիր և մաքուր հայ-
րենասիրությունը և ավելի քան բարյացա-
կամությամբ է վարվում նրա հանդեպ:

Մի ուրիշն էլ հարց է տալիս, թե արդյոք
եկեղեցին պահո՞ւմ է իր լրիվ և անպայման
անկախությունը:

Վեհափառը պատասխանում է, թե եկեղե-
ցու և կրոնքի ազատությունը ու անկախու-

թյունը երաշխավորվել է մեր երկրի Սահ-
մանադրությամբ: Փաստ է, որ մեր եկեղե-
ցին իր գոյության բովանդակ ժամանակա-
շրջանում երբեք չի եղել այնքան ազատ
իր սեփական ճակատագիրը տնօրինելու
գործում, որքան Սովետական իշխանության
օրոք:

Հայ եկեղեցին և նրա Կաթողիկոսական
Աթոռը շարունակ ենթակա են եղել հայ նա-
խարարների և թագավորների, ինչպես նաև
օտար տիրակալների կամայականությանը:
Մեր եկեղեցու պատմությունը արձանա-
գրել է այսպիսի ամոթալի և տխուր դեպքե-
րի բազմաթիվ օրինակներ: Եղել է ժամա-
նակ, որ երեք առանձին կաթողիկոսներ են
եղել — երեք ուրույն Աթոռներով: Տակավին
մինչև 90-ական թվականներին շարունակ-
վում էին էջմիածնի, Աղթամարի և Սիսի
առանձին կաթողիկոսություններ իրենց ա-
ռանձին գահակալներով և թեմերով: Դեռ
մինչև այսօր Լիբանանում գոյություն ունի
Անթիլիասի կաթողիկոսությունը — շատ ար-
ժանավոր Տեղ Գարեգին Կաթողիկոսի գա-
հակալությամբ:

Սովետական կառավարությունը երբեք
միջամուխ չէ եղել եկեղեցական գործերում:
Օրենքով կրոնքն ու պետությունը իրարից
անկախ և անջատ են մեր երկրում և, սա-
կայն, նրանք համերաշխորեն և հռաչողով
ծառայում են մեր ժողովրդին: Տարբեր եղա-
նակով նրանք ձգտում են միևնույն բանին —
հայ ժողովրդի անպայման և կատարյալ եր-
շանկության և վերելքին:

Այսօր մեր եկեղեցին ճշմարիտ և անկեղծ
հավատացողների մաքուր և առողջ մի
միություն է: Մենք պաշտում ենք մեր Աստ-
վածը մեր կամեցած ձևով: Իսկ մեծ Վարդա-
պետի սիրո և եղբայրության պատվերը ար-
դեն իրականացել է, կենսագործվել է մեր
ժողովրդի առօրյայում: Նույնը կարելի չէ
ասել քրիստոնյա համարվող շատ երկրների
համար:

Կառավարությունը մեզ տալիս է ամեն
օժանդակություն մեր կրոնական աշխա-
տանքները արդյունավոր կերպով առաջ տա-
նելու համար: Նա մեզ տրամադրում է
տպարան, թուղթ և ուսուցման միջոցներ:

Սովետական իշխանության օրով եղել են
երկու կաթողիկոսական ընտրություններ:
Պետությունը մեզ տվել է ամեն օժանդա-
կություն, որ ներկայացուցիչները ազատ,
հանգիստ և անկաշկանդ կերպով կատարեն
ընտրությունները: Այս ճշմարտությունը ծա-
նոթ է նաև արտասահմանից եկող թե կրո-
նական և թե աշխարհական ամեն մի պատ-
գամավորի:

ԹԵՅԱՍԵՂԱՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԶԵՐՄ ԵՎ ՄՏԵՐՄԱԿԱՆ

Խոսակցությունը զննելով ամենի համարձակ և մտերմական է դառնում: Հայրապետը տեղեկություններ է ուզում զանազան դպրոցների մասին: Յանկանում է իմանալ, թե որքան ուժեղ է գաղութահայերի միասնականությունը: Սփյուռքի կղերն ու եկեղեցական մարմինները՝ ինչպե՞ս են օժանդակում այդ բաղձալի միասնականության հզորացմանը: Մեր պատմական հողաբնակների պահանջը անվախորեն առաջ մղվո՞ւմ է արդյոք: Ամենից էականը — արտասահմանի հայությունը ինչպե՞ս է տրամադրված հայրենադարձի հանդեպ:

Նրան տեղեկացնում ենք թե Սփյուռքի հայությունը խանդավառ և ամուր միասնականությունը առաջ է մղում մեր ազգային պահանջները: Թե հայրենադարձը էլեկտրականացրել է ամեն մի ազնիվ և հայրենասեր հայի: Թե ոչ միայն հայ եկեղեցու պաշտոնյաները, հապա մեր բողոքական եղբայրական հայերի եկեղեցին իր հովիվներով ու սբանելի կորովով և խիզախությամբ հետապնդում են մեր պատմական հողերի պահանջը:

— Այ՛ն, բացառանում է վեհափառ Հայրապետը, երանի թե մի փոքր երիտասարդ լինեի: Ուղևորության գավազանը ձեռքս առած ես գաղութները կը շրջեի: Կասեի ամենքին, թե եկել է ցանկալի և ցնծուն հայրենադարձը: Հայ ժողովրդի բազմահազար տարիների պատմությունը մեր ժամանակաշրջանին է վերապահել մի այսպիսի անսահման բախտավորություն, մի երջանիկ և արևալուստ դարագլուխ:

Գալիք հայ երջանիկ սերունդների առջև չպետք է, որ ամոթով մնանք:

Թող մեր ունևորները հայրենադարձների համար բնակարաններ կառուցեն Հայաստանում: Թող երկիրը վերադառնալ ուղող ամեն մի հայի ճանապարհածախսը հայթափվի: Թող ամեն մի հայ պատրաստ լինի ինքն էլ հայրենադարձի երջանիկ կարավանին միանալու:

Օտար երկրներում մնալը վերջնական կորուստ է — վերջնական անհետացում:

Թող դատարկվի արտասահմանը հայերից: Թող վերջ գտնի իմ ժողովրդի ցավագին պանդխտությունը:

Եվ կտրած յոթը ծով և յոթը ցամաք կարոտավառ և հեռավոր իմ ժողովուրդը թող ուրախ և հպարտ վերադառնա իր հայրենի պայծառ աշխարհը, ազատ և հաղթական իր հզոր հայրենիքը:

Անհուն գորովով և խանդակաթ սիրով դիտում եմ մեծ Հովվապետի զգայուն, ներշնչված և քաղցրորեն համակրելի դեմքը:

Ինձ թվում է, որ նրա, ժամանակների այս մեղրաշուրթն մարդարեի, բոցեղեն խոսքերը, նրա հայրական համապարփակ սերը, նրա հուզիչ և անուշ հայրենի կանչը թափանցում են խաղաղ այս սենյակի պատերից դուրս էլեկտրական մի հզոր հոսանքի նման: Եվ արագ, որպես փայլակ և փառաբուշ ինչպես մայրենի սիրո հրավեր՝ նրանք գնում հասնում են Սփյուռքի ամեն մի հեռավոր անկյուն, ամեն մի պանդուխտ հայի, որը դեռ սիրտ տնի, ունի հիշողություն, որ տակավին մտաբերում է իր մոր լուսածոր օրորն ու ծածուկ լացը:

Հայրապետի սիրալիր կանչը ցնցում է նրան: Հիշում է նա, թե ինքն էլ ունի իր հայրենիքն ու ժողովուրդը փիրուզե հեռվում: Եվ նրա հոգում ամեն բանից գերիվեր, ամեն բանից թանկ ու ցանկալի կենում, վառվում է միայն նրա պայծառ և փառապանծ ժողովրդի, միայն նրա հրաշագեղ ու հեռավոր հայրենիքի անհուն, բոցավառ սերը: Քո աչին մատաղ, է՛յ ջան, Հովվապետ, ձայնդ զնգում է ամեն ազնիվ ու հայրենասեր հայի սրտում մի ոսկե զանգի ղողանջի նման:

Ելնում է մեր հեռավոր և հայրենակարոտ ժողովուրդը, ինչպես որ հեղեղն է ելնում:

Եվ կշինվեն անհաշիվ բնակարաններ և կարոտած աչքերի նման՝ նրանց դռները բաց՝ կսպասեն եկվորներին: Ճանապարհ կընկնեն և Սփյուռքի քո հարազատ ժողովուրդը օտարության ցավը հանած իրենց սրտից և տրտմության և նախատինքի թանձր փոշին թափ տված իրենց ճակատից ու գլխից:

Եվ տիրացած բոլոր ազգերի իմաստության, իրենց հոգին՝ հնարագետ և ձեռքը՝ ճարտար, իրենց արցունքը՝ դանձի փոխած և իրենց տառապանքը՝ վիթխարի ուժի՝ նրանք վերադառնում են իրենց հայրենի տունը՝ բազմապատկված իրենց մեռելներով ու կենդանիներով և բեղմնավոր՝ վաղվա հունձքի համար:

Նրանք լսում են քեզ, մեծասիրտ, իմաստուն Հայրապետ:

Ահա գալիս են նրանք, քո հոտի այն մասը, տրին արյան մրրիկները շարժարանքի անապատներ էին տարել:

Գալիս են նրանք ցնծության երգերով, դարնան վարդերի պես բացված և արևի պես շողշողուն ու պայծառ:

(Կ. Սիտալ. «Տեսա մեծ երկրի արեածաղը», Նյու-Յորք, 1948 թ., էջ 201—211):

